«Չարենցը և իր ժամանակաշրջանը» հանրապետական գիտաժողով նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ս/թ. նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ մեծն Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված «Չարենցը և իր ժամանակաշրջանը» հանրապետական գիտաժողովը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Հայ բանաստեղծական աշխարհը ստեղծել է տաղանդներ, բայց նրանց միշտ առաջնորդել են հանճարները: Այդ հանճարներից է Եղիշե Չարենցը: Մենք այսօր Չարենցի բանաստեղծական աշխարհում ենք և զգում ենք, թե որքան խորն է նրա մտածելակերպը, որքան ազդեցիկ և հիմնավոր են այն գաղափարները, որ նա արտահայտել է իր երկերում»,- իր ելույթում ասաց Յուրի Սուվարյանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի անունից գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը: Իր ելույթում նա, մասնավորապես, ասաց. «Չարենցը մեզ համար գոյաբանական կողմնորոշիչ է, գոյաբանական հայեցակարգ է և այդ իմաստով ամենաակտուալ դեմքերից մեկն առհասարակ: Ես դժվար եմ պատկերացնում ավելի պատշաճ և ավելի համապատասխան ժամանակներ՝ Չարենցին ընթերցելու և վերընթերցելու, քան մեր ժամանակներն են»:

«Եղիշե Չարենցը ստեղծագործեց պատմական մի քանի ենթաշրջանների բաժանվող դժվարին ժամանակներում և իրար

հաջորդող գրական ուղղությունների և աշխարհայացքային հեղաբեկումների շրջանում: Չարենցի ստեղծագործությունը դարձավ ժամանակաշրջանի բանաստեղծական խտացված արտահայտությունը: Նա վստահաբար խորհրդանիշն է ավանդույթի և նորարարության, ներդաշնակ զարգացման»,- իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը:

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը նշեց, որ Եղիշե Չարենցին նվիրված հոբելյանական տարվա շրջանակներում իրականացվել և դեռ շարունակվում են իրականացվել տարբեր ծրագրեր, միջոցառումներ թիրախային տարբեր լսարանների համար: «Չարենցը և իր ժամանակաշրջանը» հանրապետական գիտաժողովը տարվա առանցքային նշանակություն ունեցող նախաձեռնություններից է, որին մասնակցում են Հայաստանի տարբեր մարզերից 40 մասնագետներ:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը նշեց, որ Հայաստանի գրողների միությունը մարտ ամսից սկսել է Չարենցյան տարվան նվիրված միջոցառումները: «Չարենցի կիսանդրու մոտ հրավիրեցինք Հայաստանում գործող դեսպանությունների աշխատակիցների, դեսպանների, մշակույթի գործիչների, և նրանք իրենց երկրների լեզուներով արտասանեցին Չարենցի թարգմանությունները, հատկապես «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը»,- ասաց Էդվարդ Միլիտոնյանը: Նա նշեց, որ Հայաստանի գրողների միությունը լույս է ընծայել «Ես եմ հիմա» խորագրով գիրքը, որը ներկայացնում է գրողների՝ Չարենցին նվիրված ստեղծագործությունները, գրականագետների գործերը, էսսեներ:

Միջոցառումը նշանավորվեց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանի կողմից՝ իր ընտանեկան արխիվում պահվող Չարենցի ձեռագրային ինքնագրի և այլ վավերագրական նյութերի՝ Եղիշե Չարենցի տուն-թանգարանին նվիրմամբ: «Չարենցը բոլորիս համար սրբություն է, մեր ընտանիքի համար հատկապես, որովհետև տարիների ընթացքում մեր ընտանիքը շատ մոտ էր Չարենցին: Նրա անտիպ երկերում կան իմ տատիկի՝ պրոֆեսոր Աշխեն Հարությունյանի հիշողությունները և երկու բանաստեղծություն, որոնք Չարենցը նվիրել է իմ մայրիկին՝ Մարգարիտ Հարությունյանին: 50-ականներին իր ժողովածուների լուսանկարները մեր տնից էին: Մենք ժամանակին մեծ փաթեթ ենք նվիրել թանգարանին: Այսօր Չարենցի ձեռագրային ինքնագիրը և երեք լուսանկար եմ ուզում նվիրել թանգարանին: Մի լուսանկարում Չարենցն է Սարյանի հետ, մյուսում Չարենցն է իր աղջկա՝ Անահիտի հետ, հաջորդում Արփենիկն է»,- ասաց Ռուբեն Հարությունյանը: Նա ընթերցեց Չարենցի բանաստեղծությունները՝ նվիրված իր մորը՝ Մարգարիտ Հարությունյանին:

Եռօրյա գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին ավելի քան 40 գիտական զեկուցումներ: Գիտաժողովի կազմակերպիչներն են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին